Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Առարկա՝ ՆԶՊ

Թեմա՝ Հայ ժողովրդի և հայկական դիվիզիաների մասնակցությունը 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում նոր սերնդի ռազմահայրենական դաստիարակությունը մասնակիցների օրինակով:

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Այսեր Մկրտչյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐԸ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ 4

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 5

ՆՅՈՒԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 7

ՍՓՅՈՒՔԱՀԱՅԵՐԻՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ.....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակից, աշխարհագրական դիրքից, հարևանների հետ ունեցած հարաբերություններից, այսօր առկա պատերազմական իրողությունից ելնելով դպրոցում ռազմահայրենասիրական դաստիրակությունը պետք է դիտարկել որպես անհրաժեշտություն:Դիտարկելով նշված պայմանները՝ պետք է ռազմահայրենասիրական խնդիրներին նոր լուծումներ և ուղղիներ առաջադրել:Ռազմահայրենասիրական դաստիրակության նպատակը հոգեպես և ֆիզիկապես ամուր սերունդ դաստիրակելն է:Հենց դպրոցից է ձևավորվում գրագետ և հայրենասեր զինվորը, իսկ արդեն բանակում նա կատարելագործվում է և հղկվում:

Դպրոցում տարբեր առարկաների ուսումնասիրության ժամանակ (ՆԶՊ, հայոց պատմություն, հայ գրականություն) աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ, որոնք նպաստում են ազգային արժեքի նկատմամբ դրական վերաբերմունքի հայրենասիրության ձևավորմանը:Երեխայի արժեհամակարգի ձևավորմանը նպաստում են նաև դպրոցում դասասենյակների համապատասխան կահավորումը, անհրաժեշտ ուսումնական իրերով համալրումը:Մեծ ներգործություն են ունենում սովորողների վրա նաև հաճախակի այցելությունները զորամասեր, զինվորական ուսումնական հաստատություններ, հանդիպում ներմարտական գործողությունների մասնակիցների հետ, ինչպես նաև մերօրյա հերոսների հետ, ովքեր զինվորական ծառայության ընթացքում օրինակելի վարք են դրսևորել:

Ներկայիս հասարակության մեջ նկատվում է ազգայինի նկատմամբ անտարբերություն, ուստի շատ կարևոր է , որպեսզի հենց դպրոցից հիմք դրվի երեխայի մեջ հայրենասիրության սերմանմանը:Օտարածին բարքերը ևս մեծ մարտահրավեր են աճող սերնդի համար, կարևոր է, որ ապագա հայ զիվորը, նաև քաղաքացին իր գիտակցության մեջ ունենա բարձրագույն արժեքներ, ինչպիսիք են ազգասիրությունը, հայրենասիրությունը, ռազմահայրենասիրությունը:



Հետազոտության նպատակը՝

Ժամանակակից հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիրակության հիմնախնդիրների բացահայտումն ու լուծման մանկավարժական ուղղիների առաջադրումն է:

Հետազոտության խնդիրը՝

Բացահայտել հիմնական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիրակության հիմնախնդիրները:

Հետազոտական տեսական և գործնական աշխատանք

Հետզոտությունը տեսական նշանակություն ունի հիմնախնդրի շուրջ ուսումասիություն կատարողների համար և գործնական նշանակություն դպրոցների զինղեկների համար:

Հետազոտության մեթոդները

1. Տեսական ևգործնական վերլուծություն
2. Զրույց
3. Մտագրոհ
4. Համագործակցություն
5. Ձնագնդիկ
6. Հարցադրման մեթոդ

Գրական ակնարկ

Հետազոտությունը անցկացվել է 9-րդ դասարանում: Հարցադրումով միջառարկայական կապ հաստատեցի հայոց պատմության և համաշխարհային պատմության հետ, երեխաները բավականին տեղեկացված էին, այն հարցերի պատասխանները, որոնց մասին մոռացել էին, փորձում էին համացանցի օգնությամբ վերհիշել, որը շատ գովելի էր:

Հետազոտության սկզբում ցանկացա բացահայտել երեխաների նվիրվածությունը հայրենիքին, որի համար անցկացրեցի հարցում՝

Եթե մեր բանակում ծառայությունը պարտադիր չլիներ, դուք կցանկանայի՞ք ծառայել բանակում

Միանշանակ այո 22 – (14%)

Կարծում եմ այո 40- (26%)

Ոչ 3- (1,9%)



Հայ ժողովուրդի և հայկական դիվիզիաների մասնակցությունը 1941-1945թթ Հայրենական մեծ պատերազմում անգնահատելի է հայրենական մեծ պատերազմում անգնահատելի է:

Հայրենական մեծ պատերազմը ոտքի հանեց նաև հայ ժողովրդին:Զենքի կոչեվեց ավելի քան 500 հազար մարդ Խորհրդային Հայաստանում և ԽՍՀՄ այլ հանրապետություններում բնակվող հայերի մեկ հինգերորդը: պատերազմի տարիներին Հայաստանի խորհրդային զինված ուժերի կազմում ունեն գրեթե ամբողջովին հայերով համալրված 6 դիվիզյա՝76-րդ, 89-րդ , 261-րդ, 408-րդ և 409-րդ պաշտոնապես <<հայկական>> անվանումը ստացած դիվիզյաները: Խորհրդային Հայաստանում էին ձևավորվել կամ վերահամալրվել 61-րդ, 136-րդ, 138-րդ, 151-րդ, 236-րդ, 320-րդ, և 406-րդ հրաձգային(որ ազգային դիվիզիաները),որոնց անձնակազմի հիմնական մասը պատերազմի 1-ին շրջանում կազմում էին հայերը: Մեծ թվով հայեր ծառայության էին կոչվել կամ կամավոր ռազմաճակատ էին մեկնել Խորհրդային Միջինասիական հանրապետություններից, Մոսկվաից Լենինգրադից և այլ քաղաքներից: Միայն Լեռնային Ղարաբաղը Կարմիր բանակին տվեց 42 հազար զինվոր ու հրամանատար:

Հայերը կռվել են ամենուրեք՝ Բրեստ ամրոցում, Մոսկվայի մատույցներում, Ուկրաինայում ու Բելառուսում Ղրիմում ու Վոլգայի ափերին,Մերձբալթյան հանրապետություններում և Լենինգրադում: Նրանք արիաբար մարտնչել են ցամաքում օդում, ծովում աչքի ընկել պարտիզանական ջոկատներում դիմադրության շարժման շարքերում:

Մեծ է հայ զորավարների՝63 գեներալների հազարավոր սպարների ավանդը մարտի դաշտում տարած հաղթանակներում; Ռազմաճակատում մարտնչում էին հազարավոր հայ սպաներ, որոնք ղեկավարում էին ստորաբաժանումներ, զորամասեր, միավորումներ; Գեներալները մասնակցում էին զորքերի մարտավարական և ռազմավարական գործողությունների պլանների մշակմանն ու կենսագործնամը, ղեկավարում բրիգադներ ու դիվիզիաներ, կորպուսներ, բանակներ, ռազմաճակատային և ծովային նավատորմ:

ՆՅՈՒԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ աշխարհին հայտնի են Խորհրդային Միության մարշալ,Խորհրդային կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանին,Խորհրդային միության նավատորմի ծովակալ,Խորհրդային միության հերոս Հովհաննես Իսակովի,ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի(Արմենակ Խանփերյանց),զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ,Խորհրդային ՄԻության հերոս Համազասպ Բաբաջանյանի անունները: Իրենց փառքով ու պատվով են պսակվել Խորհրդային Միության 108 հայ հերոսներ և փառքի շքանշանի բոլոր 3 աստիճանի 27 ասպետներ: Անմոռաց են հանուն հայրենիքի զոհված ավելի քան 200 հազար հայորդիների անունները,նրանք զոհվեցին ռազմաճակատի տարբեր հատվածներում՝հանուն Հայաստանի,հանուն հայրենիքի:

ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության պարգևատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով Հայրենական Մեծ պատերազմի տարիներին «Արիության համար» և «Մարտական ծառայությունների համար» մեդալներով ու մարտական շքանշաններով պարգևատրվել են 66 հազար 802 հայ զինվորականներ:

ԽՍՀՄ զինված ուժերում գոյություն ունեցած ազգային զորամիավորումներից միայն հայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան էր,որ մարտերով Կովկասի նախալեռներից Ղրիմի,Լեհաստանի վրայով հասավ Գերմանիա և իր փառապանծ մարտական ուղին ավարտեց Բեռլինում: Դիվիզիայի անձնակազմի 99 տոկոսը հայեր էին:

Դիվիզիայի առջև խնդիր էր դրված կարճ ժամանակամիջոցում նախապատրաստել ռազմաճակատ մեկնելուն: Այդ խնդիրն իրագործվեց հաջողությամբ: 1942թ. ամռանը դիվիզիան արդեն լիովին պատրաստ էր մեկնելու: Այդ ժամանակ Հարավային ռազմաճակատում և Հյուսիսային Կովկասում մեր զորքերի համար դրությունը բավական բարդացել էր: Ահա այդ ծանր օրերին ռազմաճակատ մեկնեց նաև 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան և օգոստոսին դիրքեր գրավեց Գրոզնու մատույցներում, ապա մարտերի մեջ մտավ Մայգոբեկ քաղաքի մոտ:

Այսպիսին էր լեգենդար Թամանյան 89-րդ կարմրադրոշ,Կուտուզովի 2-րդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշանակիր հայկական հրաձգային դիվիզիայի անցած մարտական ուղին: 1942թ. օգոստոսի 8-ից մինչև 1945թ. մարտի 9-ը դիվիզիան անցավ 7250 կմ,որից 3640-ը՝համառ մարտերով:

Այնուհետև դիվիզիան աչքի ընկավ Լեհաստանի ազատագրման և ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախման համար մղված մարտերում: Այդ լեգենդար դիվիզիայի հրամանատարն էր գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը:

Պատերազմից հետո Թամանյան դիվիզիայի հրամանատարներն էին գեներալ-մայոր Հայկ Մարտիրոսյանը (1946-1951-ի հունվար),Խորհրդային Միության գեներալ-մայոր

Ասքանազ Կարապետյանը (մինչև 1952-ի սեպտեմբեր), գեներալ-մայոր Սերգեյ Միանսարովը: Դիվիզիան գոյատևեց մինչև 1956 թվականը:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին փառապանծ մարտական ուղի անցավ նաև հայրենական 409-րդ հրաձգային դիվիզիան:

1942 թ. դեկտեմբերի 8-ից մինչև 1943 թ. ապրիլը դիվիզիայի զորամասերում կատաղի մարտերով Կուբայի ափերից հասան մինչև Չեխոսլովակիա:

Խորհրդային Հայաստանի տարածքներում կազմավորված մյուս հայկական ազգային զորամիավորումներից էր 408-րդ հրաձգային դիվիզիան,որի զորամասերը 1942թ. սեպտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 26-ը դաժան մարտերում Անդրկովկաս ներխուժելու հիտլերյան պլանը ձախողեցին:

ՍՓՅՈՒՌՔՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Դաշնակիցների բանակում մարտնչում էին ավելի քան 80 հազար հայեր: Շատ հայորդիներ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի ազգային հերոսներ դարձան: Սփյուռքահայության ուժերով ստեղծվեցին «Սասունցի Դավիթ», «Գեներալ Բաղրամյան»տանկային շարասյուններ: Մեծ էր հայ եկեղեցու դերը հակաֆաշիստական պայքարում: Երկրորդ աշխարհամարտում Հայաստանի բուն տարածքը զերծ մնաց պատերազմի արհավիրքներից, բայց հայ ժողովուրդը իր ակտիվ մասնակցությունն ունեցավ գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի դեմ մղած արդարացի պատերազմում:

1941թ հուլիսի 5-ին և 31-ին ամենայն հայոց հայրապետության տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի, իսկ օգոստոսի 17-ին Խորհրդային Հայաստանի մտավորականությունը կոչ ուղղեցին հայ ժողովրդին, ողջ արտասահմանյան հայությանն ըստ ամենայնի օժանդակելու հայրենիքի մեծ և արդար գործին,միավորելու բոլոր ուժերը ֆաշիզմի դեմ մղած պայքարում: «Ֆաշիզմը չի հաղթանակի» կարգախոսով սփյուռքահայերը, նյութական և բարոյական օգնությունից բացի, զենքը ձեռքներին պայքարի ելան իտալական և գերմանական ֆաշիստական ռոմակների դեմ: Եվրոպայում, Ֆրանսիայում , Հարավսլավիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Լեհաստանում, ամենուրեք, որտեղ ֆաշիզմը սպառնում էր մարդկության ազատությանն ու անկախությանը, հայ առաջադիմական ուժերն առաջին գծում էին:

Սիրիահայերի, Լիբանանահայերի նամակներում գրված է, որ իրենք պատրաստ են համախմբվելու՝ կանգ չառնելու ոչ մի զոհության առաջ: Մի շարք երկրներում հայերը ստեղծեցին առաջադիմական նոր կազմակերպություններ, որոնք միավորում և գլխավորում էին սփյուռքահայերի պայքարը ֆաշիզմի դեմ:Այդպիսի կազմակերպություններից էին «Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը» Սիրիայում, «Ամերիկայի հայ ազգային խորհուրդը», «Հայերի ազգային ճակատը» Փարիզում, «ՍՍՌՄ բարեկամների միությունը» Թավրիզում և այլն:

Այդ կազմակերպությունների կարևոր ձեռնարկություններից էր «Սասունցի Դավիթ»տանկային շարասյան ստեղծման համար միջոցների համար միջոցների հանգանականությունը (1943-1944թթ), որին մասնակցեցին ԱՄՆ-ի, Հարավային Ամերիկայի, Իրանի, Եգիպտոսի, Լիբանանի, Սիրիայի, Կիպրոսի հայերը:

1943թ հունվարի 26-ին և 1944թ հունվարի 7-ին ստացվեց ԽՍՀՄ ժողկոմղորի նախագահ Ի. Վ. Ստալինի ողջույնը և շնորհավորական հեռագիրը, «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման առթիվ:

Հանդանակություն էր սկսվել նոր Գեներալ Բաղրամյան տանկային շարասյան ստեղծման համար, որն ընդհատվեց պատերազմն ավարտելու կապակցությամբ:

Հայ ժողովուրդը միշտ էլ երախտապարտ է եղել այն ժողովուրդներին, որոնցից օգնություն ու աջակցություն է ստացել:

1963 թ. Իտալիայի ազգային հերոսի կոչման հետմահու արժանացավ Մկրտիչ Դաշտոնյանը, որը քաջաբար կռվել էր 54-րդ գարիբալդիական Մակարյո պարտիզանական բրիգադում: Ֆրանսահայությունը պատերազմի ամբողջ ընթացքում նեցուկ կանգնեց հայրենասերներին Փարիզից մինչև Մարսել Լիոն, Վալանս, Դեսին, Բարդո, որտեղ կային հայեր, նրանք միավորեցին ընդհատակյա կազմկերպություններում՝ նպատակ ունենալով վնասել հիտլերային ուժին: Ստեղծվեց ֆրանսահայ ազգային ճակատը, որին գործուն մասնակցություն ունեցան Քյուրեջյանը և ֆրանսիական դիմադրության շարժման հերոս Միքայել Մանուշյան, որոնց մասին ֆրանսիական կոմկուսի կենտկոմի քարտուղար ժակ Դյուկլոն գրեց «Հայ ժողովուրդն իրավունք ունի պարծենալու Մաուշյանի խմբի հերոսներով , որոնք իրենց կյանքը տվեցին հանուն ժողովուրդների ազատությանը»: մեծ էր պարտիզանական գնդի դեռը Ֆրանսիայում Նիմ և Կալմետ քաղաքների ազատագրման գործում: Ի նշան գնահատանքի Դը Գոլը գնդին էր հանձնել Ֆրանսիայի կառավարության դրոշը:

Ամերիկյան բանկում ծառայում էին 20 հազար հայ մարտիկներ ու սպաներ, որոնցից շատերն արժանացան կառավարական բարձր պարգևների:Գեներալ Էյզենաուերը շնորհավորել է Եղվարդ Էռնեստ Դերվիշյանին, որը պարգևարել է բարձրագույն պաչգևով Ամերիկյան ազգային հերոսի Կոնգրեսի պատվո մեդալով:

Հայերի համազգային խիզախությունը և հակաֆաշիստական պայքարում ակտիվ մասնակցությունն ուներ իր հատուկ պատճառները:Նրանք չէին մոռացել և չեն մոռանա :Օսմանյան կասրությունում կայզերական Գորմանիայի գիտությամբ և հովանավորությամբ 1915 թ Առաջին համաշխարհային պատերազմի հրահրված հայերի հրեշավոր ցեղասպանությունը: Հիտլերը գտնում էր, ինչպես և երիտթուրքերը, որ գլխավորը ոչ թե տարածքի նվաճումն է, այլ տեղաբնակների իսպառ վերացումը, բնաջնջումն ու արտաքսումը: 1939թ օգոստոսի 22-ին ելույթ ունենալով Օբերգարցբուրգ քաղաքում, զինվորականության ընտրանու

առաջ Հիտլերը հայտարարում է՝ <<Վերջիվերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը>>: Հիտլերը, Գյորինգը, Ռոզենբերգը և ֆաշիզմի մյուս պարագլուխները չէին վստահում հայերին, նրանք գտնում էին, որ Կովկասում հարկավոր է օգտագործել մի կողմից ՝ բնիկների, հայերի, վրացիների և այլոց, մյուս կողմից՝ ռուսների միջև եղած հակասությունը՝ <<ընդ որում, հաշվի առնելով հայերի հատուկ անբարյացկամությունը գորմանացիների նկատմամբ>>:

Մարտնչելով ֆաշիզմի դեմ՝ հայ ժողովրդի զավակները Կովկասյան ճակատամարտում, Ստալինգրադում, Կուրսկի աղեղում, պատերազմի հեռավոր մարտադաշտերում պաշտպանում էին իրենց հայրենիքը: Անկասկած է, որ մարտի դաշտում նրանց թափած արյան, նրանց կյանքի գնով, նրանց զանգվածային հերոսությամբ էր նաև, որ Հայրենական Մեծ պատերազմին Խորհրդային Հայաստանը զերծ մնաց թուրքական նվաճողների ասպատակություններից:

Խորհրդային Միության վրա հարձակվելու նախօրյակին՝ 1941թ հունիսի 18-ին Թուրքիան և Գերմանիան կնքեցին բարեկամության և չհարձակման պայմանագիր: Թուրքիային ընդգրկելով ԽՍՀՄ-ի դեմ ռազմավարական պլանների մեջ՝ Գերմանիան ապահովեց իր զորքերի աջ թևը: Թուրքիան թույլ տվեց, որ Սև ծով մտնեն գերմանական և իտալական ռազմանավերը: Անդրկովկասին, մասնավորապես, Հայաստանին հարող տարածքներում Թուրքիան այդ ժամանակ արդեն ուներ զորքերի զգալի կուտակում, դրանք հետագայում կազմեցին 26 դիվիզիա: Ստալինգրադի սպասվող անկումից հետո նրանք հարձակվելու էին Խորհրդային Հայաստանի վրա: Բարեբախտաբար, այդ տեղի չունեցավ, ֆաշիստական զորքերին Կարմիր բանակի հասցրած ծանր հարվածները կանխեցին նաև թուրքական զորքերի ներխուժումը Կովկաս և դրանով մեծացրին նոր Մեծ Եղեռնի վտանգը:

Ահա թե ինչու ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակը նաև հայ ժողովրդի հաղթանակն է: Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը հաղթանակի օր է նաև հայ ժողովրդի համար:

Հայրենական Մեծ պատերազմի 115 հայաստանցի 105-ը ազգությամբ հայեր էին, որոնցից 2-ը՝ կրկնակի հերոս: Մյուս 10 հերոսները այլազգիներ էին(ռուս, ուկրաինացի, ասորի, հույն և քուրդ):

Հայերց 4-ը հերոս են դարձել 1939-1940թթ. Խորհրդաֆինական պատերազմում, 1941-1945թթ. Հայրենական Մեծ պատերազմում հերոս են դարձել 98-ը, որոնցին 3-ը՝ հետպատերազմյան տարիներին կատարած սխրանքների համար:

1995թ. փետրվարի 16-ին հետմահու Ռուսաստանի հերոսի կոչում են շնորհել Հայրենական Մեծ պատերազմում զոհված ծովային օդաչու Սուրեն Թուշչյանին:

Եզրակացություն

Ինչպե՞ս կգնահատեք ՆԶՊ առարկայից ստացած գիտելիքների պաշարը հայրենական պատերազմում հայերի մասնակցության մասին

գերազանց 49 – (31%)

լավ 8-(5%)

բավարար 8- (5%)

ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՂՅՈՒՍԱԿ

Հ/հ	ՄԱՐԶԵՐ	ԸՆԴԱՄԵՆԸ	ՀԱՇՄԱՆԴԱՄ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետություն			
1	ք. Երևան	1215	675
2	Շիրակ	314	112
3	Լոռի	440	117
4	Արագածոտն	107	52
5	Արարատ	218	121
6	Արմավիր	237	147
7	Գեղարքունիկ	305	158
8	Կոտայք	517	274

9	Սյունիք	251	147
10	Վայոց Ձոր	52	14
11	Տավուշ	317	148
	Ընդամենը	3973	1960
ԼՂՀ			
	Ստեփանակերտ	142	81
	Մարտակերտ	112	74
	Մարտունի	98	52
	Ասկերան	47	29
	Ընդամենը	399	236
	Ընդամենը ՀՀ և ԼՂՀ	4372	2196

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աշոտ Մելքոնյան «Պատմություն»
2. Ռ. Սիմոնյան «Հայոց պատմություն» էջ 650-669
3. «Մեր հաղթանակները» հատոր 4. 2012թ. Երևան Նորվանք
4. Ղ. Դալլաքյան «Մարտական 89 »Երևան 1966թթ.
5. Հայկական 89-րդ Թամանյան եռաշքանակիր դիվիզիայի անցած մարտական ուղին «Փաստաթղթերի և նյութերի ժողովածու»1985թ. Երևան
6. Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում ՀՀՊՆ հրատարակություն: Երևան 2005թ.
7. Հարությունյան Կլիմենտի Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում 1941-1945թթ. Երևան 2001թ.